Պարոն/Տիկին Գ. Մխիթարյանին *ին*
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Մ. Մեսրոպյանին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ ի գիտություն

Մ. Մեսրոպյան

«06» Ապրիլի 2026թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝**
   - Արմեն Հունանյան,
   - Սիրանուշ Ղարախանյան,
   - Զարուհի Ստեփանյան:

2.Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

- Հեռահաղորդակցության վարչության պետ,
- հեռահաղորդակցության վարչության ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժնի պետ,
- միջազգային համագործակցության բաժնի պետ:

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ Բուդապեշտ, Հունգարիա, 2026 թվականի ապրիլի 29-30-ը:

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝ Եվրոպական միության արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցությունը կարգավորողների ցանց (EaPeReg) :

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Անցկացնել EaPeReg ցանցում գործող կարգավորող մարմինների անկախության և լայնաշերտի հարցերով և ռոումինգի հարցերով աշխատանքային խմբերի համատեղ հանդիպումները՝ որպես աշխատանքային խմբերի նախագահող:

6.Քննարկված թեմաները (հարցերը)՝ 15-րդ REWG և 19-րդ IRB EWG համատեղ նիստին մասնակցել են Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի, Ադրբեջանի ազգային կարգավորող մարմինների ներկայացուցիչները, Խորվաթիայի, Լատվիայի, Լիտվայի, Լեհաստանի, Իռլանդիայի, Գերմանիայի և Չեխիայի Հանրապետության ազգային կարգավորող մարմինների ներկայացուցիչները, ինչպես նաև EU4Digital նախաձեռնության ներկայացուցիչները:

EU4Digital նախաձեռնության ներկայացուցիչները ներկայացրին լայնաշերտ կապի հասանելիության մոնիտորինգի գործընթացի արդյունքները: EU4Digital նախաձեռնության շրջանակներում իրականացվող ԵՄ արևելյան գործընկերության երկրների լայնաշերտ կապի հասանելիության մոնիտորինգը ներառում է ԱԼԳ երկրներից 2025 թվականի տվյալների հավաքագրումը և վավերացումը՝ ազգային պրոֆիլներ և տարածաշրջանային զեկույց կազմելու նպատակով, որով գնահատվում է լայնաշերտ կապի հասանելիությունը և շուկայի զարգացումները: Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը և Մոլդովան ներկայացրել են նախնական տվյալները, թեև որոշ տվյալների մասով ճշգրտումները դեռևս ընթացքի մեջ է: Գործընթացի ընթացքում օգտագործվում են այնպիսի հիմնական ցուցանիշներ, ինչպիսիք են՝ ընդհանուր, ամրակցված/ֆիքսված և շարժական լայնաշերտ կապի հասանելիությունը, գերարագ կապի հասանելիությունը (100 Մբիթ/վ և ավելի) և 5G տեխնոլոգիայի համար նախատեսված ռադիոհաճախականային տիրույթի տրամադրման զարգացումները:

Ընդհանուր առմամբ, տվյալները ցույց են տալիս լայնաշերտ կապի ներթափանցելիության զարգացման միտումները շարժական կապի ծառայությունների և գերարագ ամրակցված/ֆիքսված ցանցերի հասանելիության մասերով: Այդուհանդերձ, գիգաբիթային արագագործ կապի հասանելիությունը ԱԼԳ տարածաշրջանի երկրներում դեռևս սահմանափակ է և անհավասարաչափ բաշխված: Միևնույն ժամանակ, շարժական կապի 5G տեխնոլոգիայի ցանցերը սկսում են ներդրվել՝ շնորհիվ հաճախականությունների բաշխման և ոլորտի կարգավորման և զարգացման քաղաքականությունների նախաձեռնությունների, ինչպիսիք են ենթակառուցվածքային նախագծերը, թվային ռազմավարությունները և կարգավորող դաշտի համապատասխանեցումը ԵՄ չափանիշներին: Ճշգրտման փուլում գտնվող տվյալները կքննարկվեն երկկողմ հիմունքներով, իսկ վերջնական զեկույցը նախատեսվում է ընդունել Եվրոպական միության արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցությունը կարգավորողների ցանցի 27-րդ Լիագումար նիստի ընթացքում, որը նախատեսվում է անցկացնել առցանց՝ 2026 թվականի մայիսի 27-ին:

EU4Digital նախաձեռնության ներկայացուցիչները ներկայացրին նաև EU4Digital երկրորդ փուլի տարբեր աշխատանքային ուղղություններով կատարված աշխատանքները և 2022 թվականից ի վեր ձեռք բերված բոլոր արդյունքները: Նախաձեռնությունը ներառում էր մի քանի ուղղություններ՝ հեռահաղորդակցության կանոններ (Telecom Rules), էլեկտրոնային վստահություն (eTrust) և միջսահմանային թվային ծառայություններ, էլեկտրոնային առևտուր (eTrade, կենտրոնանալով էլեկտրոնային մաքսային (eCustoms) և էլեկտրոնային լոգիստիկայի վրա (eLogistics)), էլեկտրոնային առողջապահություն (eHealth), էլեկտրոնային առևտուր (eTrade), տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների նորարարություն և ստարտափների էկոհամակարգեր, թվային հմտություններ: Հեռահաղորդակցության կանոնների ուղղությունը ներառում է տարածաշրջանային և ազգային մակարդակով աշխատանքներ, որոնք մասամբ աջակցություն են ստացել նաև EaPeReg աշխատանքային խմբերի կողմից՝ RRA, RSA, 5G մասնավոր ցանցերի զարգացում, Թվային ծառայությունների ակտի և Թվային շուկաների ակտի ներդրում Մոլդովայում և Ուկրաինայում, ազգային կարգավորող մարմինների անկախություն, լայնաշերտ հասանելիության մոնիթորինգ և խթանում, 5G անվտանգության համար ԵՄ գործիքակազմ, լայնաշերտ շուկայի վերլուծություն, էլեկտրոնային հաղորդակցության օրենսդրություն (EECC) Մոլդովայում:

Ներկայացվել է նաև Տարածաշրջանային ռոումինգի համաձայնագրի (RRA) ընթացիկ կարգավիճակը: Հաշվի առնելով տարածաշրջանում առկա իրավիճակը՝ 2023 թվականին խումբը որոշել է RRA-ի գործողության ուժի մեջ մտնելու ժամկետ նախատեսել 2026 թվականի հունվարի 1-ը, որը կապահովի սիմետրիկ սակագների կիրառում ԱլԳ երկրներում, որոնք համահունչ կլինեն ԵՄ սակագներին: Մշակվել էր մեթոդաբանություն մանրածախ արդյունավետ գնի հաշվարկման համար, որը պետք է գումարվի ԵՄ-ում կիրառվող մեծածախ գնին, ինչն էլ կձևավորի ԱլԳ երկրների միջազգային ռոումինգի ծառայության հաճախորդի համար կիրառվող վերջնական գինը:

RRA-ի վերջին տարբերակը (տարբերակ 38) շրջանառվել էր 2023 թվականի կեսերին և քննարկվել անդամ երկրների միջև: Միևնույն ժամանակ, 2023թ. դեկտեմբերին կայացած Արևելյան գործընկերության թվային ոլորտի նախարարական հանդիպման ժամանակ նախարարները հաստատել են իրենց պատրաստակամությունը ստորագրել RRA-ն: Ուկրաինական կողմը ևս հաստատել է ստորագրումը՝ երկու պայմանով.

- RRA-ն ուժի մեջ կմտնի Ուկրաինայում ռազմական դրության վերացումից 6 ամիս անց,
- RRA-ի ստորագրումը որևէ ազդեցություն չի ունենա ԵՄ-ի և Ուկրաինայի միջև «Ռոումինգ ինչպես տանը» (RLAH) երկկողմ գործընթացի վրա:

Հայտնի է, որ ԵՄ կողմից նամակը փոխանցվել է ուկրաինացի ներկայացուցիչներին, սակայն քննարկումների արդյունքների վերաբերյալ այլ տեղեկատվություն դեռևս առկա չէ: Զուգահեռաբար, «EU4Digital» թիմը թարմացրել է տեղեկատվությունը ԵՄ-Մոլդովա և ԵՄ-Ուկրաինա երկկողմ ռոումինգի պայմանավորվածությունների վերաբերյալ: Մոլդովան 2026 թվականի հունվարի 1-ից միացել է ԵՄ ողջ տարածքում ձայնային զանգերի ավարտման (termination) սակագների կարգավորմանը: Նշվեց, որ առկա են երկու առանձին ռոումինգային տարածքներ, և Մոլդովայի ու Ուկրաինայի միջև կապը դեռևս բացակայում է, ինչի լուծումը RRA-ն է:

Նիստի ընթացքում ԱլԳ երկրների ներկայացուցիչները ներկայացրել են իրավիճակը.

Հայաստան. Վերահաստատվել է, որ ստորագրման վերաբերյալ քաղաքական որոշումն ընդունված է, ակնկալվում է Ռոումինգի փորձագիտական աշխատանքային խմբի (REWG) եզրակացությունը ազգային խորհրդակցությունների մեկնարկի վերաբերյալ:

Ադրբեջան. Երկկողմ քննարկումներ են ունեցել «EU4Digital» թիմի հետ և սպասում են Ուկրաինայի հաստատմանը՝ հետագա քայլերի համար:

Մոլդովա. Անհրաժեշտ քայլերն արված են, սպասվում է REWG եզրակացությունը:

Վրաստան. Վերահաստատվել է, որ ստորագրման վերաբերյալ քաղաքական որոշումն ընդունված է, ակնկալվում է Ռոումինգի փորձագիտական աշխատանքային խմբի (REWG) եզրակացությունը ազգային խորհրդակցությունների մեկնարկի վերաբերյալ:

Ուկրաինա. Թարմացումներ չկան:

Հաշվի առնելով վերոնշյալը և այն, որ վերջին տարբերակի շրջանառումից ի վեր անցել է զգալի ժամանակ, քննարկումները կծարունակվեն՝ այդ թվում նաև համաձայնագրի նախագծի թարմացման նպատակով:

Հետագա քննարկումները վերաբերում էին աշխատանքային խմբերի նոր ձևավորվելիք ուղղություններին, ներառյալ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմաների հնարավոր փոփոխությանը և առաջնահերթ թեմաների հստակեցմանը:

Քննարկման առաջնահերթ թեմաները հետևյալն են.

- լայնաշերտ կապի քարտեզագրում,
- թվային ցանցերի ակտ (DNA), թվային շուկաների ակտ (DMA),
- կարգավորող մարմնի անկախություն,
- ընդհանուր թույլտվությունների շրջանակ,
- լայնաշերտ հասանելիության շուկայի վերլուծությունը և կիրառվող միջոցներ,
- համընդհանուր ծառայության շրջանակ,
- ցանցային անվտանգությունը և կայունություն,
- վերջնական օգտագործողների իրավունքներ,

- գիգաբիթ ենթակառուցվածքների ակտ (GIA),
- արհեստական բանականության ակտ (AI),
- ռոումինգի և սպեկտրի տարածաշրջանային համաձայնագրեր:

Խմբերի ղեկավարության՝ ՀԾԿՀ-ի ներկայացուցչների կողմից առաջարկվել է վերակազմավորել խմբերը հետևյալ կերպ.

Մանրածախ շուկայի և ռոումինգի փորձագիտական աշխատանքային խումբ (կենտրոնանալով RRA-ի և վերջնական օգտագործողների իրավունքների վրա):

Տարածաշրջանային կապի և կարգավորող դաշտի փորձագիտական աշխատանքային խումբ (կենտրոնանալով լայնաշերտ կապի հասանելիության մոնիտորինգի, շուկայի վերլուծության և կարգավորող մարմինների անկախության հարցերի վրա):

ՀԾԿՀ ներկայացուցիչների կողմից առաջարկվեց Արևելյան գործընկերության (ԱլԳ) երկրների հեռահաղորդակցության կարգավորողների հետաքրքրություններից բխող այլ թեմաների շուրջ աշխատանքները կարող են իրականացվել ոչ մշտական հիմունքներով, խմբերի աշխատաժողովների, սեմինարներ և այլ տեսակի միջոցառումների կազմակերպման շրջանակում: Համաձայնություն է ձեռք բերվել, որ վերոնշյալ ցանկը և առաջարկը կփոխանցվեն անդամներին, ովքեր սահմանված ժամկետում կներկայացնեն իրենց կարծիքը՝ EaPeReg-ի Լիագումար նիստում վերջնական որոշում կայացնելու նպատակով:

Մասնակիցները քննարկեցին կարգավորող մարմինների կողմից շուկայի վերլուծության արդյունքում կիրառվող միջոցները (remedies) և շուկայի մոնիտորինգի պրակտիկաները՝ ԵՄ կարգավորող շրջանակին համապատասխան, ներառյալ ներդրումները, որոնք արտացոլում են էլեկտրոնային հաղորդակցությունների եվրոպական օրենսգրքում (EECC) ամրագրված սկզբունքները և BEREC-ի ուղեցույցները: Քննարկումը կենտրոնացած էր ex-ante (կանխարգելիչ) կարգավորող միջոցների կիրառման, շուկայի վերլուծության ընթացակարգերի և արդյունավետ մրցակցության ապահովման գործում ազգային կարգավորող մարմինների դերի վրա: ԱլԳ երկրների ներկայացուցիչները ներկայացրել են թարմացված տեղեկատվություն շուկայի մոնիտորինգի իրենց ազգային մոտեցումների վերաբերյալ՝ ընդգծելով առաջընթացը և ԵՄ մեթոդաբանություններին համապատասխանեցման հարցում առկա բացերը: Լայնաշերտ կապի մոնիտորինգի գործիքներին նվիրված հատուկ նիստի ընթացքում ներկայացվել են հունգարական լավագույն փորձը, մասնավորապես՝ աշխարհագրական հետազոտության համակարգերի օգտագործումը՝ ԵՄ կապակցվածության նպատակներին և պետական օգնության քարտեզագրման պահանջներին համապատասխան: Սա գործնական օրինակներ է

ընձեռել, որոնք կարող են աջակցել ԵՄ կանոններով նախատեսված լայնաշերտ կապի քարտեզագրման պարտավորությունների իրականացմանը:

Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց ԵՄ էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում քաղաքականության վերջին զարգացումներին, ներառյալ առաջարկվող Թվային ցանցերի ակտը (DNA), որի նպատակն է արդիականացնել ԵՄ հեռահաղորդակցության շրջանակը: Թվային ցանցերի ակտը (DNA), ինչպես մանրամասն ներկայացված էր Չեխիայի հեռահաղորդակցության գրասենյակի (CTU) կողմից, համապարփակ կարգավորում է, որը նախատեսված է միավորելու մի քանի գոյություն ունեցող շրջանակներ, այդ թվում՝ EECC և Բաց ինտերնետի կանոնակարգը, մեկ միասնական օրենսդրական փաստաթղթի մեջ: Նպատակ ունենալով խթանել ԵՄ միասնական շուկան՝ DNA-ն առաջնահերթություն է տալիս գիգաբիթային օպտիկամանրաթելային կապին, պղնձե ցանցերի պարտադիր անջատմանը և հաճախականությունների սպեկտրի ուժեղացված կառավարմանը՝ Եվրոպական հանձնաժողովի մեծացված վերահսկողության ներքո: Թեև այն պահպանում է հիմնական սկզբունքները, ինչպիսիք են շուկայի գերիշխող դիրքը (SMP) և սպառողների պաշտպանությունը, CTU-ն մտահոգություն է հայտնել որոշումների կայացման կենտրոնացման, կարգավորող կանխատեսելիության հնարավոր նվազման և ազգային կարգավորող մարմինների նկատմամբ ընկալվող «խորը անվստահության» վերաբերյալ: Ակնկալվում է, որ DNA-ի օրենսդրական գործընթացը կշարունակվի մինչև 2027 թվականը, իսկ լիարժեք կիրառումը նախատեսվում է ուժի մեջ մտնելուց մոտ վեց ամիս անց:

Վերջնական օգտագործողների իրավունքների վերաբերյալ քննարկումները հիմնված էին EECC-ի դրույթների և ԵՄ սպառողների պաշտպանությանն առնչվող կանոնների վրա՝ ներառելով թափանցիկությունը, ծառայությունների որակը, պայմանագրային իրավունքները և վեճերի լուծման մեխանիզմները: ԱԼԳ երկրները ներկայացրել են այդ դրույթների հետ իրենց համապատասխանության ներկա մակարդակը՝ մատնանշելով ԵՄ օրենսդրությանը մոտարկման ուղղությամբ ձեռնարկված օրենսդրական և ինստիտուցիոնալ քայլերը:

7.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Հանդիպման արդյունքներից ելնելով՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել համատեղ աշխատանքները Ուկրաինայի ներկայացուցիչների հետ՝ RRA վերաբերյալ իրենց կողմից առաջադրված առաջարկությունների քննարկման նպատակով:

Միևնույն ժամանակ, խմբերի ղեկավարությունը կշարունակի քննարկել աշխատանքային ծրագրում ներառվելիք թեմաները, որոնց մասին վերջնական որոշումները կկայացվեն 2026 թվականի մայիսի 27-ին:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն նախատեսվում է՝ որպես EaPeReg ցանցում գործող ռոումինգի և կարգավորողների անկախության և լայնաշերտի հարցերով աշխատանքային խմբերի նախագահող, շարունակել աշխատանքները խմբերի աշխատանքներում ներառվելիք թեմաների և նոր ուղղությունների ձևավորման մասով, ինչպես նաև համագործակցությունը EU4Digital նախաձեռնության փորձագետների հետ՝ խմբերի բնականոն գործունեությունը ապահովելու նպատակով:

Հաշվի առնելով հանդիպման ժամանակ քննարկված ժամկետները՝ առաջարկում ենք երկկողմ ձևաչափով շարունակել քննարկումները EU4Digital նախաձեռնության փորձագետների հետ՝ լայնաշերտ կապի հասանելիության մոնիտորինգի գործընթացի արդյունքները ներառող զեկույցում առկա Հայաստանին վերաբերող ցուցանիշների ճշգրտման/թարմացման մասով:

Զուգահեռաբար, առաջարկվում է ուսումնասիրել միջոցառման ընթացքում ներկայացված՝ հեռահաղորդակցության ոլորտի կարգավորման ԵՄ-ում կիրառելի փորձն ու ըստ անհրաժեշտության դրանք դիտարկել ոլորտը կարգավորող ակտերի լրամշակման կամ նոր կարգավորումների մշակման ընթացքում՝ նկատի ունենալով նաև ՀՀ և ԵՄ միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից բխող՝ օրենսդրության մոտարկման հանձնառությունները:

Գործուղվող ---------- 06.05.26թ. **Ա. Հունանյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 06.05.2026թ. **Ս. Ղարախանյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 06.05.2026թ. **Հ. Ստեփանյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն

որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով__

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 255-ԳՔ, Հրաման 278-ՀՆ, 09.04.2026թ.

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության պետ՝ **Արմեն Հունանյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի միջազգային համագործակցության բաժնի պետ՝ **Զարուհի Ստեփանյան,**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժնի պետ՝ **Սիրանուշ Ղարախանյան,**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.**Բուդապեշտ /Հունգարիա /**

5. Գործուղման ժամկետները **28.04.2026-01.05.2026 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ**, օրապահիկ և այլն)

) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, **օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Արմեն Հունանյան	Զարուհի Ստեփանյան	Սիրանուշ Ղարախանյան	Ընդամենը
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)				-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)				-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը Ընդամենը (դրամ)				-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)	84	84	84	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	31,561	31,561	31,561	
	Օրերի քանակը	4	4	4	
	Ընդամենը (դրամ)	126,245	126,245	126,245	378.735
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Մուտքի արտոնագրի վճար				-
	Այլ ծախսեր (նկարագրել)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		126.245	126.245	126.245	378.735

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ

07.05.2026